17066

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.
Пролетарии всех стран, соединяйтесь!

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂ
СТРАХОВАЯ КАССА

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ
СТРАХОВАЯ КНИЖКА

№ ....

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА

Ծառայության տեղը
Место службы ....

Տրված է
Выдано «..........» .... 192 թ.

363.3
Ա-67

ԵՐԵՎԱՆ
1924

368.3
Ч-67
№180
Са1226
С1926

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.
Пролетарии всех стран, соединяйтесь!

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԳԱՆՁԱՐԿՂ
КАССА СОЦИАЛЬНОГО СТРАХОВАНИЯ

Առանց ուրիշին հանձ-
նելու իրավունքի
Без права передачи

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿ
СТРАХОВАЯ КНИЖКА №..................

Ազգանուն
Фамилия ....

Անուն
Имя ....

Հայրանուն
Отчество ....

Ծննդյան թիվը
Год рождения ....

Ազգություն
Национальность ....

Ընտանեկան դրությունը
Семейное положение ....

Կրթական ցենզ
Образователный ценз ....

Ծառայության տեղը
Место службы ....

Պ ա շ տ ո ն
Должность ....

Արհեստ
Профессия ....

Բանվոր կամ ծառայող (ընդգծել)
Рабочий или служащий (подчеркнуть) ....

Հ ա ս ց ե
А д р е с ....

Ապահովագրվածի ստորագրությունը
Подпись застрахованного ....

ՏՐՎԱԾ Է
Выдано «..........» .... 192 թ.

Կ. Տ.
М. П.

Հիմնարկության կամ ձեռնարկության
պետի ստորագրություն ....
Подпись главы учреждения, предприятия

Գանձարկղի ստորագրություն ....
Подпись кассы

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР
2001
2010

ԱՊԱՇՈՎԱԳՐՎԱԾԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ
СПИСОК ЧЛЕНОВ СЕМЬИ ЗАСТРАХОВАННОГО

№ №	Անուն և ազգանուն Имя и фамилия	Ընտանիքի վարպետի հետ ապահովագրվածի կապակցությունը (հարազատություն) Отношение к застрахованному (родство)	Հասակը Возраст	Ստորագր. Подпись
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

Լուսանկարի տեղ

Место фотографической карточки

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ. ԴԱՐԱՆ
Գ. ԲԻԲԻՆՅԱՆ
ZUUՌ-Арм ССР
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
36343-66

ԱՊԱՇՈՎԱԳՐ. ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОТМЕТКИ СТРАХОВОЙ КАССЫ О БОЛЕЗНЯХ.

№ №	Տրվող և ոչնչի Выдано и ничего							Ծանոթ. Примеч.
	Տրվող, թիվ Место и число	Հիվանդանոցային թիվ տվյալ ամիսը գտնվող № № բոլոր հետևյալ ցուցակներում Больничный № в выданных листках	Բժշկական վերաբերմունք Врачебное определение	Հիվանդանոցում գտնվելու ամսաթիվը Перрод болезни	Դեղամիջոց По рецепту	Շերմենդ. Червонн. Ռ. Р. / Կ. К.	Գին. դր. Заказн.	

50686-Ա.-հ.

ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԳԱՆՁԱՐԿՂԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОТМЕТКИ СТРАХОВОЙ КАССЫ О БОЛЕЗНИЯХ.

№ №	Ամիս, թիվ Месяц и число	Հիվանդության տաթիթ տրված բյուլետենի № № № № выданных бюлетеней болезни	Բժշկական վորոշում Врачебное определение	Հիվանդության ժամանակամիջոց Период болезни	Տրված և ռոճիկ Выдано содержание				Ծանոթ. Примеч.
					Կարգով По категории	Չերվոնեց. Червонн. Ռ. Р.	Չերվոնեց. Червонн. Կ. К.	Փեղ. դր. Заказнак	

ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԳԱՆՁԱՐԿՂԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ОТМЕТКИ СТРАХОВОЙ КАССЫ О БОЛЕЗНИЯХ.

№ №	Ամիս, թիվ Месяц и число	Հիվանդության տաթիթ տրված բյուլետենի № № № № выданных бюлетеней болезни	Բժշկական վորոշում Врачебное определение	Հիվանդության ժամանակամիջոց Период болезни	Տրված և ռոճիկ Выдано содержание				Ծանոթ. Примеч.
					Կարգով По категории	Չերվոնեց. Червонн. Ռ. Р.	Չերվոնեց. Червонн. Կ. К.	Փեղ. դր. Заказнак.	

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ՆՊԱՍՏԸ
ВЫДАНО ПОСОБИЕ ПО МАТЕРИНСТВУ

№ №	Ամիս, թիվ Месяц и число	Միանվագ Единовременно			Կերակր. համար На кормление			Հիմք Основание	Ծանոթ. Прим.
		Չերվոնեց. Червонн.		Ֆնկ. պր. Закзнак	Չերվոնեց. Червонн.		Ֆնկ. պր. Закзнак.		
		Ռ. Р.	Կ. К.		Ռ. Р.	Կ. К.			

ՆՊԱՍՏ Ե ՏՐՎԱԾ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՍ., ԹԱՂՄԱՆ, ԿԱՐԱՆՏԻՆԻ, ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔ ՅԵՎ ԱՅԼՆ):
ВЫДАНО ПОСОБИЕ (ДОПОЛНИТЕЛЬНЫЕ ВИДЫ, ПОХОРОНЫ, КАРАНТИН, УХОД ЗА БОЛЬНЫМ И Т. П.

№ №	Ամիս, թիվ Месяц и число	Ինչի համար և տրված На что выдано	Հիմքը Основание	Չերվոնեց. Червонн.		Ֆնկ. պրամ. Закзнаками	Ծանոթ. Прим.
				Ռ. Р.	Կ. К.		

ՈՒՂԱՐԿՎԱԾ Է ՍԱՆԱՏՈՐԻԱ, ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐ
ОТПРАВЛЕН В САНАТОРИЮ, ДОМА ОТДЫХА

№№	Ամիս, թիվ Месяц и число	Վորտեղ է ուղարկված Куда отправлен	Բժ. հանձ. վարչության Постанов. врачебной комиссии	Վորքան ժամանակով На какой срок	Տրված է Выдано						Ծանոթ. Примеч.
					Ճանապարհածախս Проездные			Ռոճիկ Содержание			
					Շերվոնեց. Червонн.		Փեղ. դր. Закснак.	Շերվոնեց. Червонн.		Փեղ. դր. Закснак.	
					Ռ. Р.	Կ. К.		Ռ. Р.	Կ. К.		

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ОКАЗАНИЕ СПЕЦИАЛЬНОГО ЛЕЧЕНИЯ

№№	Ամիս, թիվ Месяц и число	Ինչպիսի բուժ. Какое лечение	Վորտեղ է ցույց տրված Где оказано	Տրված է Выдано						Ծանոթ. Прим.
				Ճանապարհածախս Проездные			Ռոճիկ Содержание			
				Շերվոնեց. Червонн.		Փեղ. դր. Закснак	Շերվոնեց. Червонн.		Փեղ. դր. Закснак.	
				Ռ. Р.	Կ. К.		Ռ. Р.	Կ. К.		

Սոցիալական ապահովագրության կանոնների խախտման համար արված նկատողություններ

Земечания за нарушения правил по социальному страхованию

№ №	Ամիս, թիվ Месяц и число	Նկատողություններ Замечания	Ստորագրություն Подпись

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

I. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ՀԻՎԱՆԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Ամբուլատորիայում բժշկական ոգնություն ստանալու համար, բանվորը կամ ծառայողը հիմնարկության վարչության գիտությամբ որվա վորոշ ժամերին թողնում է իր աշխատանքը ամբուլատորիա գնալու համար։

2. Այն դեպքերում, յերբ բանվորը կամ ծառայողը բժշկական ոգնություն է ստանում տանը կամ հիվանդանոցում, հիվանդության առաջին որն իսկ տեղեկոմից կամ գործարկոմից ստանում է ,,տեղեկագիր'', վորը և հանձնում է իրեն բժշկող բժշկին։ Բժիշկը պատասխանում է տեղեկագրի հարցերին և մի ամիս լրանալուց կամ հիվանդի առողջանալուց հետո (յեթե հիվանդությունը մի ամսից պակաս է տևում) ուղարկում է տեղեկագիրը հիմնարկության վարչության, վորն իր հերթին տեղեկագրի համապատասխան հարցերին պատասխանելով ուղարկում է ապահովագրական դանձարկղին։ Դանձարկղը վճարում է հիվանդի աշխատավարձը հիվանդության առաջին որից հաշվելով, այն անձին, վորին մատնացույց կանի հիվանդը։ Յեթե հիվանդը իր առողջական դրությամբ ի վիճակի չէ մատնացույց անել այս կամ այն անձին, աշխատավարձը տրվում է նրա ընտանիքի այն անդամին, վորը ներկայացնում է նրա ապահովագրական գրքույկը։

3. Խեղման, վերքեր և այլ վնասվածքներ ստա-

նալու դեպքում, յերբ բժշկական ոգնությունը հասցվում է ամբուլատորիական կարգով, բայց հիվանդը իր առողջական դրությամբ չի կարողանում աշխատել, ապա բժիշկը հիվանդից „տեղեկագիր,, է պահանջում և պատասխանում հոմապատասխան հարցերին։ Մնացածի վերաբերմամբ պահպանվում է յերկրորդ կետում հիշատակված կարգը։

4. Ապահովագրական գանձարկղի անդամ հղի կանայք և ծննդկանները ազատվում են աշխատանքից բժշկական քննիչ հանձնաժողովի թույլտվությամբ։

Ֆիզիքական աշխատանքով զբաղվող անձինք ազատվում են ութը շաբաթ ծննդաբերությունից առաջ և ութը շաբաթ հետո։ Մտավոր աշխատանքով զբաղվող անձինք՝ վեց շաբաթ ծննդաբերությունից առաջ և վեց շաբաթ հետո։

ԾԱՆՈԹ. Այն հղի կանայք, վորոնք սահմանված ժամանակից ուշ են արձակուրդ ստանում, ծննդաբերությունից հետո լրացուցիչ արձակուրդ չեն կարող ստանալ։

5. Տեղեկագրից ոգտվել կարող են միայն ապահովագրվածները, բայց վոչ մի դեպքում ընտանիքի անդամները։

II. ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Յերբ ապահովագրվածը կամ նրա ընտանիքի վորևե անդամը հիվանդանում է, պետք դիմի բուժարան (ամբուլատորիա), ուր նա ստանում է հերթից դուրս հատուկ բժշկական ոգնություն։

ԾԱՆՈԹ. Ապահովագրվածների ընտանիքի անդամները բժշկական ոգնություն ստանում են ընդհանուր հիմունքներով։

2. Ամբուլատորիա այցելող հիվանդները դեղորայք են ստանում նույն տեղում կամ դեղատներից։

3. Այն դեպքում, յերբ հիվանդ ապահովագրվածը կամ նրա ընտանիքի անդամը ի վիճակի չեն բուժարան գնալ, բժշկին տուն են կանչում։

4. Բժշկին տուն կանչելիս անհրաժեշտ է ապահովագրական գրքույկն ուղարկել կենտրոնական բուժարան, ուր և որդեր և գրվում բժշկի անունով։

5. Բուժարանից տրված որդերով բժիշկը այցելության է գնում հիվանդին մինչև յերբեք անդամ։

6. Հիվանդին այցելող բժիշկը հատուկ դեղատոմսերով դեղ և գրում հիվանդի համար, իսկ դեղորայքը տրվում է դեղատնից։

7. Այն դեպքում, յերբ բժիշկը յերբեք անդամ այցելելուց հետո հիվանդի գրությունը չի բարելավվում, ապա հիվանդը նույն բժշկի կողմից ուղարկվում է համապատասխան հիվանդանոց, ուր հիվանդը տեղավորվում է վոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, հաշվելով բժշկի պահանջման որից։ Հակառակ դեպքում բժշկությունը պետք շարունակվի տանը մինչև նրան հիվանդանոց տեղավորելը։

8. Պատենտավոր միջոցներ, հիվանդներին խնամելու և առողջապահական այլ առարկաներ ապահովագրվածներին տրվում են Ա. ժ. Կ. ինքնարժեքով։

9. Արհեստական ատամներ ապահովագրվածների համար պատրաստվում և դրվում են ինքնարժեքով։ Այդ դեպքում վճարումը կարող է լինել մասամաս, յեթե հիմնարկությունը յերաշխավորի ապահովագրվածի համար։

10. Յուրաքանչյուր ապահովագրական գանձարկղին կից գործում է բժշկական-եքսպերտային հանձնաժողով, վորի պարտականությունն է քննել հիվանդ ապահովագրվածներին՝ աշխատանքից ազատելու, հատուկ բժշկության ուրիշ քաղաքներ և հանրապետու-

թյուններ ուղարկելու և հանգստյան տներում ու սանատորիաներում տեղավորելու համար։ Նույն հանձնաժողովը քննում է հաշմանդամներին, վերջիններիս անաշխատունակության աստիճանը վորոշելու համար։

ԻԷ. ՀԱՏՈՒԿ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Յեթե հիվանդ բանվորը, կամ ծառայողը կամ նրանց ընտանիքի անդամները կարիք ունեն հատուկ, մասնագիտական բժշկության ուրիշ քաղաքներում կամ հանրապետություններում, ապահովագրական գանձարկղն այդպիսիներին ուղարկում է բժշկվելու, բժշկական եքսպերտային հանձնաժողովի վկայությամբ։

2. Հատուկ բժշկության ուղարկվողը ապահովագրական գանձարկղից ստանում է փաստացի ճանապարհածախս և մի ամսվա ռոճիկ։

ԾԱՆՈԹ. Յեթե հիվանդությունը տևի ավելի, քան մեկ ամիս, հիվանդը կարող է ստանալ հետագա ռոճիկը այն ապահովագրական գանձարկղից, վորի շրջանում գտնվում է նա։ Այդ մասին տեղեկացվում է այն ապգանձարկղը, վորի անդամն է հիվանդ ապահովագրվածը։

3. Ապահովագրվածները և նրանց ընտանիքի անդամները հատուկ բժշկական ոգնություն ձրիաբար են ստանում բոլոր Ս. Խ. Հանրապետություններում։

ԼՎ. ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Ապահովագրված բանվորները և ծառայողները հանգստյան տներում տեղ կարող են ստանալ հերթական արձակուրդի ժամանակ, համապատասխան արհմիությունների միջոցով։

2. Հանգստյան տներ ուղարկվողները քննության են յենթարկվում բժշկական-եքսպերտային հանձնաժողովի կողմից։

3. Հանգստյան տուն ուղարկվողները ստանում են Ապգանձարկղից միայն ճանապարհածախս, իսկ ռոճիկը տրվում է ծառայության տեղից։

Ֆ. ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Սանատորիական բժշկության կարիք ունեցող ապահովագրվածները քննության են յենթարկվում նախ բժշկական-եքսպերտային հանձնաժողովներում և ապա ուղարկվում Առժողկոմատի կուրորտային հանձնաժողովը։

2. Կուրորտային հանձնաժողովից համապատասխան վկայական ներկայացնող ապահովագրվածներին Սոցիալական Ապահովագրության Վարչությունը տեղ և հատկացնում սանատորիայում։

3. Սանատորիա ուղարկվողները տեղական ապգանձարկղից ստանում են փաստացի ճանապարհածախս և մի ամսվա ռոճիկ։ Յեթե հիվանդությունը տևում է մի ամսից ավելի, հետագա ամիսների ռոճիկը ապահովագրվածն ստանում է այն ապահով. գանձարկղից, վորի շրջանում նա բժշկվում է։

Սոցիալական Ապահովագրության Վարչության
Պետ՝ - Մ. Յուզբաշյան

Առժողկոմի տեղակալ Բուժբաժնի Վարիչ՝
Ջալլադյան

ՎԼ. ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

1. Մայրության միանվագ նպաստ յերեխայի բաժին գնելու համար ապահովագրվածին տրվում է ծննդաբերությունից մեկ ամիս առաջ։ Այդ առթիվ ապահովագրվածին վկայական և տալիս բժշկական-եքսպերտային հանձնաժողովը։

2. Ծննդաբերությունից հետո յերեխային կերակրելու համար ապահովագրվածին տրվում է ամսական նպաստ՝ 9 ամիս շարունակ, հաշվելով ծննդաբերության որից։ Նպաստը տալու որը նշանակում է ապգանձակղը։

3. Ծննդաբերությունից յետո յերեխային կերակրելու նպաստ ստանալու համար համապատասխան վկայական ե ներկայացվում ,,Զագս''-ից՝ ապահովագրական գրքույկի հետ միասին։

VII. ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏ

1. Թաղման նպաստ տրվում ե թե ապահովագրվածի և թե նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում։ Նպաստը ստանալու համար Ապ. Գանձարկղին պետք ներկայացնել ապահովագրական գրքույկը և ,,Զագս''-ից տրված վկայականը։

VIII. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

1. Գործազրկության նպաստ ստանալ կարող ե ամեն մի գործազուրկ, վորը ցուցակագրված ե Աշխատանքի Բորսայում և վորը փաստաթղթեր ե ներկայացնում Ապ. Գանձարկղին իր վարձու ծառայության ստաժի մասին։

2. Գործազրկության նպաստ ստանալու համար Գանձարկղին պետք ե ներկայացնել հայտարարություն, վորին պետք ե կցված լինեն Աշխատանքի գրքույկը և ծառայության ստաժը հաստատող փաստաթղթերը։

3. Գործազուրկների դիմումները քննության են առնվում հատուկ հանձնաժողովի կողմից, վորին մասնակցում են Ապահ. Գանձարկղի, Արհմիության և Աշխատանքի ներկայացուցիչները։

4. Հանձնաժողովի վորոշումները կարող և փոխել կամ բեկանել Սոցիալական Ապահովագրության Վարչությունը։

5. Ապահովագրված գործազուրկը վայելում ապահովագրված բանվորի կամ ծառայողի բոլոր իրավունքները։

IX. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

Ա. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ.

1. Մշտական անաշխատունակությունը հաստատվում ե բժշկական-եկսպերտային քննիչ հանձնաժողովի կողմից։ Ապ. Գանձարկղին տրված դիմումներն ուղարկվում են այդ հանձնաժողովին։

2. Ապ. Գանձարկղ դիմում ներկայացնելիս պետք ե կցվեն նաև ծառայության ստաժը հաստատող փաստաթղթերը։

3. Բժշկական հանձնաժողովի քննությունից հետո հաշմանդամության կատեգորյան հաստատում ե Ապահովագրական Գանձարկղը։

4. Ապահովագրված հաշմանդամը վայելում ե ապահովագրված բանվորի կամ ծառայողի բոլոր իրավունքները։

Բ. ՄԵՌԱԾ ՆԵՑՈՒԿՆԵՐԻ (ՄԻԱԿ ԿԵՐԱԿՐՈՂՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻԲԻՆԵՐԻՆ

1. Ապահովագրված նեցուկի մահից հետո, նրա ընտանիքի բոլոր անաշխատունակ և անչափահաս անդամները իրավունք ունին կենսաթոշակ ստանալու։

2. Այդ նպատակով ,,Զագս''-ից վկայական և ներկայացվում ապահովագրված նեցուկի մահվան մասին, ըստ վորում ներկայացվում են նաև մեռածի ապահովագրական գրքույկը և ծառայությունը հաստատող փաստաթղթերը։

363438-66

ՀՍՍՀ-Արմ ՍՍՀ
Ս. Մ. Ա. Մյասնիկյան
ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի անվան

3. Կենսաթոշակ է տրվում նաև անհայտ կորած նեցուկների ընտանիքներին, յեթե վերջիններս համապատասխան փաստաթղթեր են ներկայացնում Ապահովագրական Գանձարկղին։

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՀԻՇԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԸ.

1. Վոր Ապահովագրական Գանձարկղը բանվորական կազմակերպություն է։

2. Վոր գանձարկղի միջոցները գոյանում են ձեռնարկատերերի տոկոսային մասնաբաժիններից, ուստի և յուրաքանչյուր ապահովագրված պետք է հետևի, վոր ձեռնարկատերը կամ հիմնարկության վարչությունը ժամանակին վճարեն գանձարկղին հասանելիք ապահովագրական գումարները։

3. Վոր գանձարկղի յուրաքանչյուր անդամ պետք է հետևի, վոր ապահովագրվածներից վոչ վոք ի չարն գործ չը դնի գանձարկղի ոգնությունը։ Յուրաքանչյուր մի ռուբլին, վոր անտեղի և սխալ կը վճարվի, վերջին հաշվով կը խորտակի ամբողջ գործը։

4. Գանձարկղի ոգնությունն ի չարը գործ դնողը արժանի չէ բանվորական ընտանիքի անդամ լինելու։ Պայքարեցեք զանցառուների և հիվանդ ձևացողների դեմ։

5. Անհրաժեշտ է կատարել բժշկի բոլոր խորհուրդները, հակառակ դեպքում ապահովագրվածը ոգնություն ստանալու իրավունքից կը զրկվի։

6. Ապահովագրվածը պարտավոր է կատարել բժիշկների բոլոր խորհուրդներն ու կարգադրությունները և միաժամանակ աջակցել, վոր վարակիչ հիվանդությունների դեմ ձեռք առնվող միջոցները գործադրվին։ Ապահովագրվածը պարտավոր է նաև ճշտությամբ կատարել բոլոր առողջապահական և սանիտարական կանոնները*։

7. Ապահովագրվածը պարտավոր է կատարել սոցիալական ապահովագրության բոլոր վորոշումները, վորովհետև սոցիալական ապահովագրությունը գրանվում է իրենց, բանվորների ձեռքին։

8. Բոլոր նպաստներն ու կենսաթոշակները գանձարկղից տրվում են մի ամսվա ընթացքում։ Մի ամսվա ընթացքում վոչ հարգելի պատճառով չը ստացողները զրկվում են նպաստից ընդմիշտ։

9. Ապահովագրական գրքույկը պետք է խնամքով պահել, վորովհետև այդ գրքույկը մի անգամ է միայն տրվում ամբողջ ծառայության ընթացքում։

10. Ներկա հրահանգներում հիշատակված փաստաթղթերից բացի, գանձարկղի պահանջման դեպքում, պետք է ներկայացնել նաև լրացուցիչ փաստաթղթեր, ըստ գանձարկղի հայեցողության։

11. Պաշտոնից արձակվելիս կամ կամովին հեռանալիս ապահովագրվածը պարտավոր է իր ապահովագրական գրքույկը թողնել հիմնարկությանը։

12. Հեռացածների կամ արձակվածների ապահովագրական գրքույկները հիմնարկության վարչության կողմից ուղարկվում են ապահովագրական գանձարկղին։ Հակառակ դեպքում արձակվածը կամ հեռացածը կը համարվի վորպես ծառայությունը շարունակող։

*) ԾԱՆՈԹ. Ի զարգացումն ներկա հրահանգների ապահովագրվածներին տանը բժշկական ոգնություն հասցնելու կարգի մասին Սոցիալական Ապահովագրության Վարչության համաձայնությամբ Առժողկոմատի կողմից կը հրատարակվեն մանրամասն հրահանգներ։

Սոցիալական Ապահովագրության Վարչության կողմից հրատարակված են լրացուցիչ հրահանգներ հղի կանանց նպաստ և աշխատավարձ, ինչպես նաև մայրության նպաստ տալու կարգի մասին։

Հ. Ս. Խ. Հ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

I *ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ—ՅԵՐԵՎԱՆՈՒՄ*

II *ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴԱՆՁԱՐԿՂՆԵՐ*

1. *Յերևանում։*
2. *Լենինականում։*
3. *Ղարաքիլիսայում (Փամբակ-Լոռու գավ.)*
4. *Դիլիջանում։*
5. *Եջմիածնում։*
6. *Նոր-Բայազեդում։*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐ

7. *Գորիսում (Զանգեզուրի գավ.)։*
8. *Բեշիշքյանդում (Դարալագյազի գավ.)։*
9. *Մեղրիում։*

Սոցիալական Ապահովագրության Վարչության

Պետ՝ Մ. Յուզբաշյան

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՅԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ОТМЕТКИ КОНСУЛЬТАЦИИ

2013
<< Ազգային գրադարան >>
NL0049958

Ա
C 21276

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

Պետհրատի յերկրորդ տպարան